Երկրորդ ընթերցում
Նախագիծ

Կ-915[1]-10.12.2015-ՏՀ-010/2

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# Օ Ր Ե Ն Ք Ը

## «ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** «Բնապահպանական վճարների դրույքաչափերի մասին» Հայաստանի Հանրապետության 2006 թվականի դեկտեմբերի 20-ի ՀՕ-245-Ն օրենքի 4-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությունով.

«Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններից Հայաստանի Հանրապետություն ներմուծվող՝ շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների դիմաց վճարի դրույքաչափը հաշվարկվում է այդ ապրանքների համար «Հայաստանի Հանրապետության և Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների միջև անուղղակի հարկերի հաշվարկման և վճարման առանձնահատկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով որոշվող ավելացված արժեքի հարկով հարկման բազայի (առանց այդ ապրանքների համար օրենքով սահմանված կարգով հաշվարկված ակցիզային հարկի գումարի)՝ վճարի հաշվարկման բազայի նկատմամբ:»:

**Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

# ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

**«Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ առաջինից երկրորդ ընթեցմամբ քննարկման ժամանակահատվածում ներկայացված առաջարկությունների, դրանց ընդունման կամ չընդունման վերաբերյալ**

| Առաջարկության հեղինակը | Առաջարկության բովանդակությունը | Կատարված փոփոխությունները |
|---|---|---|
| ՀՀ կառավարություն | Նախագծի 3-րդ հոդվածի 2-րդ պարբերությամբ նախատեսվել էր, որ ԵՏՄ անդամ հանդիսացող պետություններից ՀՀ ներմուծվող՝ շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների համար վճարի հաշվարկված գումարները հարկային մարմին ներկայացվող ներմուծման հարկային հայտարարագրում ներմուծողի կողմից ներառելու դրույթները տարածվում են օրենքն ուժի մեջ մտնելու պահին չավարտված ներմուծման հաշվետու ժամանակաշրջանների վրա: Առաջարկվում է հստակեցնել, որ այդ դրույթները տարածվում են օրենքն ուժի մեջ մտնելու օրն ընդգրկող ամսվա ընթացքում կատարված ներմուծումների վրա: | Նախագծի 3-րդ հոդվածի 2-րդ պարբերությունում «պահին չավարտ-ված ներմուծման հաշվետու ժամանակաշրջանների վրա» բառերը փոխարինվել են «օրն ընդգրկող ամսվա ընթացքում կատարված ներմուծումների վրա» բառերով: |